

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ*

ԳՐԱԲԱՐԻ ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIII ԴԱՐՈՒՄ

(ԸՍՏ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿԻ)

ՀՏԴ 340:809.198.1

Հոդվածում հեղինակները ներկայացնում են գրաբարի հնչյունական համակարգի կրած պատմական փոփոխությունները և տալիս նրա համաժամանակյա վիճակն ըստ 13-րդ դարի պատմիչ Ստ. Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» աշխատության: Այդ փոփոխություններն արտահայտվել են գրաբարի ձայնավորների, բաղաձայնների նոր հնչյունափոխություններով՝ պայմանավորված հնչյունների դիրքով և փոփոխությամբ: Հեղինակները ներկայացնում են հայերենի այբուբեն մուտք գործած **Ֆ** գրանշանի հնչույթային արժեքը, քննության են ենթարկում գրաբարի երկբարբառներն ու եռաբարբառները և մատուցում երկբարբառների ու եռաբարբառների պարզեցման նոր փաստեր:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հնչյունափոխություն, երկբարբառ, եռաբարբառ, բաղաձայն, ձայնավոր, հնչյունների դիրք, շեշտ, պատմական հնչյունափոխություն, դիրքային հնչյունափոխություն, բաղաձայն-

ների եռաստիճան համակարգ:

Լեզվում կատարված տարժամանակյա տեղաշարժերն իրենց ազդեցությունն են թողել լեզվի հնչյունական համակարգի վրա: Այն կրել է զգալի փոփոխություններ գրաբարի դասական շրջանի համեմատությամբ: Թեև հայ մատենագիրները շարունակում էին ստեղծագործել գրաբարով, սակայն նրանց լեզվում ևս նկատելի էր ժամանակի ազդեցությունը. հանդես եկած հնչյունական նոր երևույթները էականորեն փոխում էին լեզվի հնչյունական համակարգի նկարագիրը:

Լեզվի հնչյունական համակարգում տեղ գտած փոփոխություններով ուշագրավ է Ստ. Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկը, որում արտացոլվել են այս ժամանակաշրջանին (XIII դար) բնորոշ հնչյունական իրողությունները, որոնք բնորոշ չէին գրաբարին և որպես նոր իրողություններ ի հայտ են գալիս խնդրո առարկա երկում:

Այդ փոփոխությունները ներառել են գրաբարի ձայնավորները, բաղաձայնները, երկբարբառները և եռաբարբառները:

Ա. Զայնավորների հնչյունափոխություն:

Ուսումնասիրվող երկու հանդիպում են ձայնավորների տարատեսակ փոփոխություններ, որոնք կատարվել են պատմական հնչյունափոխության հետևանքով: Այդ երևույթը օրինաչափ դրսևորում ունի և ցույց է տալիս լեզվի հնչյունական համակարգի պատմական զարգացման ընթացքը: Այսպես՝

Է//ե ձայնավորները շատ հաճախ փոխարինում են միմյանց՝ ունենալով արտասանական ընդհանրություն: Ըստ Մ. Աբեղյանի՝ գրաբարում XII դարից ի վեր վերացել է Է և Ե ձայնավորների տարբերությունը. Է-ն դարձել է Ե¹. Երուսաղեմ // Երուսաղեմ. «Քանզի Յոբնաղ անուն Երուսաղեմի եպիսկոպոս ի Քաղկեդոնի ժողովումն էր, և եկեալ անտի Երուսաղեմացոց ընթերցուածն» (1, 164)²:

Գրաբարում ձայնավորից առաջ *ու*-ն կարդացվում էր *վ*³: Քննության ենթակա երկու հանդիպում են բառեր արդեն *ու*-ի փոխարեն *վ* գրությամբ. ընդ որում՝ զգալի տոկոս են կազմում *վ*-ով տարբերակները, ինչպես՝ Աղուանք գրաբարյան ձևի փոխարեն ունենք Աղվանք տարբերակը, նաև՝ Որդուատ // Որդվատ, ինչպես՝ Աշխարհ յանուն նորա Աղուանք (Աղվանք) կոչեցաւ⁴ (1, 55): Կռուէին ի վերայ

գեղեցիկ գեղջն Որդուատայ (1, 121): Էր ջուր վնասակար ի յՈրդվայր գիւղ (1, 61):

Ու > վ պատմական հնչյունափոխությունը օրինաչափություն էր դարձել 9-րդ դարից⁵: Սակայն վերջին ժամանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 8-րդ դարում արդեն *ու > վ* պատմական հնչյունափոխությունը կայունացել էր *վ* գրությամբ⁶:

Հանդիպում է է (*ե*) > ա անցում՝ Վարդէվատ // Վարդավատ, Օձնեցի // Օձնացի, Աթաբէկ // Աթաբակ, ինչպես՝ Սուրբ Գրիգորի ի Վարդէվատի աւուրսն մի քառասունք առնեն (2, 13): Հոգույն Վարդավատին քառասունսն պատարագ առնել (2, 35): Գովելի զաւակն զարդու սուրբ եկեղեցոյ Յովհան Օձնեցին (1, 161): Յաւուրս Յովհաննու Օձնացոյ» (2, 202): Որք էին ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ Աթաբէկին (2, 86): Ի բռնակալութեան Աթաբակ Իւանէի (1, 312):

Առավել հաճախ հանդիպում են ձայնավորների դիքքային հնչյունափոխության դրսևորումներ:

Է-ի հնչյունափոխությունը տարածված էր գրաբարում, ինչպես՝ Ե ի վաղուց հետե՛ցանկացեալ այսմ նորոգման եւ վխալստութեան (1, 94): Նա զընթրինալսանսն համբերելով քաղցնոյր (1, 169):

Քննվող երկու, սակայն, երբեմն է-ն չի հնչյունափոխվում՝ տնօրէնութիւն, ինչպես՝ Զիարդ զընթրէնութեանն խորհուրդ բովանդակ կատարեսցէ (1, 168):

Օ > ու անսովոր հնչյունափոխության դրսևորում է հանդիպում, հմմտ. տոմար // տումար, ինչպես՝ Ի Լևոնի տումարոյն (1, 158): Ուղղեցին զանտարակուսելի տումարն (1, 139):

Գրաբարում *ի* ձայնավորը *ո* հոլովիչից առաջ դառնում էր *ւ*՝ նախնի // նախնոյ, գրաբարյան այս ձևին զուգահեռ հանդիպում է նաև նախնուոյ տարբերակը՝ *ի > ու*

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Զ, Ե., 1974, էջ 99:

² Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. հ. Ա, Բ, Փարիզ, 1859 (այսուհետ փակագծերում կնշվեն Ստ. Օրբելյանի աշխատության՝ այս հրատարակության էջերը):

³ Սերոբ Ղազարյանն իր «Հայոց գրական լեզվի պատմություն» (Ե., 1961, էջ 176) աշխատության մեջ այն կարծիքն է հայտնում, որ հայերենի ու-ն 5-րդ դարում հավանաբար չի ունեցել վ հնչումը և ոչ էլ համընկել է ժամանակակից ու-ի արտասանության հետ, այլ արտասանվել է մոտավորապես ոու երկբարբառային հնչումով:

⁴ Պետք է նշել, որ միայն այս նախադասության մեջ է գործածվում Աղուանք ձևը, մյուս բոլոր դեպքերում հանդիպում է Աղվանք տարբերակը:

⁵ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 7:

⁶ Տեն Լ. Լ. Խաչատրյան, Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի լեզուն, (թեկն. ատենախոսության սեղմագիր), Ե., 1999, էջ 6:

հնչյունափոխությամբ. Սկսեալ նահապետութիւնս այս *ի նախնոց* Սիսակայ (1, 53): Իմացեալ եթէ սկիզբն յԱրտաշէրէ առնու՝ յիւրոին *նախնոց* (1, 71):

Հազվադեպ հանդիպում է *ե>ը* հնչյունափոխությունը՝ Ֆախրելմսեհ // փախրըլմսեհ, ինչպես՝ Որք եւ գգուական անուամբ *Ֆախրելմսեհ* կոչէին (2, 87): Որ եւ *Փախրըլմսեհ* կոչեցաւ յԱթաբէկէն (2, 96):

Ո>ու անցումը հնչյունափոխական երևույթ է, որի ամենահին վկայությունները վերաբերում են XI դարին¹: Նման հնչյունափոխության բազմաթիվ օրինակներ են հանդիպում քննվող երկրում. Բարդուղիմէի // Բարդուղիմէի, Մաթոսաղայ // Մաթոսաղայ, ինչպես՝ Որ ի սրբոյն *Բարդուղիմէ* շինեցաւ (2, 85): Վասն գալոյ սուրբ Առաքելոյն *Բարդուղիմէի* (1, 60): *Մաթոսաղայի*՝ Յակոբայ որդւոյ (1, 255): Վասն *Մաթոսաղայի*՝ Սիւնեաց եպիսկոպոսի (1, 155):

Սակայն այժմ հայտնի են փաստեր, որոնք վկայում են, որ դեռևս X դարում այս երևույթն ընդգրկում էր տարածքային մի քանի ճյուղավորում²:

Հնչյունափոխություն կարող է լինել նաև բարբառների ազդեցության հետևանքով. հանդիպող *n(o)>ե* անցումը օրինաչափ չէ՝ լոգորդ // լեդորդ. սա հավանաբար բարբառի ազդեցության արդյունք է. Մեդրիի և Ղարաբաղի բարբառներում բառամիջի *n*-ի դիմաց կար է (*ե*) ձայնավորը³. օրինակ՝ «Եւ մտեալ լեդորդաց հանին յայն կողմն» (2, 85):

Որոշ բառեր երկում հանդիպում են թե՛ հնչյունափոխված, թե՛ անհնչյունափոխ ձևերով, որոնք, հավանաբար, գրչագրական սպրդումների արդյունք են.

Ը ձայնավորը երբեմն բառամիջում

գրվում է՝ Մըսըր և Մըսր. Գնացեալ ի *Մըսըր* (2, 191): Վարեցաւ ի գերութիւն ի *Մըսըր* (2, 252), ընդ որում՝ թեքման ժամանակ մի դեպքում կորցնում է առաջին վանկի *ը*-ն՝ Մսրայ, մյուս դեպքում՝ ոչ՝ Մըսրայ. Ընդ սուլտանին *Մսրայ* (2, 189): Ի բանտ անգերծանելի գնտանին *Մըսրայ* (2, 192):

Որոշ դեպքերում բառասկզբում կարող են ձայնավորներ ավելանալ, ինչպես՝ սպասալար և ասպասալար բառերում նկատվում է *ա* հնչյունի հավելում. Եդ *սպասալար* ամենայն Վրաց (2, 136): Մեծ *ասպասալարն* Ջաքարէ մեռանի (2, 144):

Ձայնավորների համակարգում տեղի ունեցած հնչյունական փոփոխությունները վկայում են, որ լեզվի հնչյունական մակարդակում փոփոխությունները նոր դրսևորումներ են ստացել գրաբարի դասական շրջանի համեմատությամբ:

Բ. Բաղաձայնների հնչյունափոխություն:

Բաղաձայնների պատմական քննությունը վկայում է, որ ժամանակի ընթացքում դրանք նույնպես կրել են որոշակի փոփոխություններ, որոնք հիմնականում ուղղախոսության ազդեցությամբ են պայմանավորված: Եռաստիճան համակարգով հանդես եկող բաղաձայնները՝ ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ, ի հայտ են բերում աստիճանական տեղաշարժեր և անցումներ:

ա) Ձայնեղ բաղաձայնների վերածումը խուլ բաղաձայնի. ընդհանուր պատմական հնչյունափոխության են ենթարկվել հայերենի ձայնեղ բաղաձայնները. որոշ դեպքերում դրանք խուլ բաղաձայնի են վերածվել: Ձայնեղների խլացման երևույթը հատկապես բնորոշ է եղել Մեդրիի, Ղարաբաղի բարբառներին, ուստի դրսևորվում է նաև Ստ. Օրբելյանի երկում: Այս երևույթը բնորոշ է եղել ոչ միայն հայերենին, այլև միջերկրածովյան ենթաշերտի լեզուներին⁴:

Բաղաձայնական համակարգում տե-

¹ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, մաս I, Ե., 1982, էջ 115:

² Ը. Ղուկասյան, 10-րդ դարի հայ պատմագրության լեզուն (թեկն. առենախոսության սեղմագիր), Ե., 2004, էջ 7:

³ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, մաս I, էջ 97:

⁴ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Ե., 1987, էջ 306:

ղի ունեցած փոփոխությունները, սակայն, պահպանվել են միայն ուղղախոսության մակարդակում, և հայերենը շարունակել է պահպանել դասական շրջանի գրությունը:

Գ>կ՝ Վախթանգ>Վախթանկ, վտանգ>վտանկ, կնգուղ>կնկուղ. Պատերազմել ընդ Վահագանայ՝ թագաւորին Վրաց (1, 106): Գիտէք զանհնարին վրասնկան, որ այժմ յաշխարհս մեր եհաս (1, 134): Որոյ առեալ զկնկուղ և զփիլոնն (1, 147):

Գ>պ՝ Մահմեդ>Մահմետ, պինդ>պինտ. Վասն անօրինի Մահմեդայ՝ զգետոյր զհայրենի զգեստն (1, 216): Գրեն պատասխանի յոյժ բիրտ և պինտ (1, 100):

Ջ>ճ՝ Խառնիճաղանջ>Խառնիճաղանճ, Նախիջևան>Նախճաւան. Զի ծանիցես զնոսա ոչ ի խառնիճաղանճ ամբոխից (1, 50): Այրեալ էին ի Նախճաւանի (1, 180):

Ղ>խ փոփոխությունը հայերենում նկատելի է եղել XIII դարից: Օրինակ՝ Ադթամար>Ախթամար, Խեղդամահ>Խեխդամահ. Վերստին առին յաւուրս Աթաբէկ Իւանէին ի ձեռն Առփայեցի Ախթամարին (2, 95): Ըմբռնեցին զնա և խեխդամահ սատակեցին (2, 216):

Բ>պ՝ Աբուսեճ>Ապուսէճ¹. Սպանին զԱպուսէճ (1, 213):

բ) Խուլ բաղաձայնները վերածվում են ձայնեղ բաղաձայնների. բաղաձայնական համակարգի այսպիսի տեղաշարժերը տարբեր բարբառների ազդեցության արդյունք են և կատարվել են պատմական երկարատև ժամանակահատվածում: Խուլերի ձայնեղացման գործընթացը սկսվել է VII դարից հետո ընկած ժամանակահատվածում: Միջին հայերենի շրջանում, մասնավորապես կիլիկյան հայերենի ենթաշրջանում, այսպիսի ուղղագրական շեղումներն առատ էին²:

Պ>ք՝ Մեսրոպ>Մեսրոբ. Եւ Մեսրոբայ կրկին պատիւ առեալ Անանիայ (1, 66):

Կ>գ՝ Բաբկէն>Բաբգէն. Բաբգէն..., զոր Պարսիկք կալան (1, 92):

Տ>ղ՝ դատող>դաղող, պռաւտաՖրանտէս>պռաւտաՖրանդէս. Դատաստանին յիւր դատողէն սևերես լինի (2, 13): Եւ կոչիլ պռաւտաՖրանդէս պատրիարքին Հայոց (2, 228):

Ծ>ճ՝ ընծայ>ընճայ. Եւ տայր ընճայ (1, 127):

X–XI դարերից հետո խ խուլ բաղաձայնը սկսում է լծորդվել ձայնեղ ղ բաղաձայնի հետ. այդ իսկ պատճառով խ–ի դիրքային փոփոխություններ են տեղի ունենում: Սրա հիման վրա էլ միջնադարյան հայ մատենագրության մեջ հանդիպում են ղ–ով նոր տարբերակներ: Գրության նման ձևերը ներկայացնում են խ>ղ հնչյունափոխությունը՝ պայմանավորված խուլերի տարնմանությամբ³. Ինչպես՝ խ>ղ Խանդան, պասխազ>պասղազ. Հանդիման լինէր Մանկու դանին (2, 159): Արդուն, որ էր վազիր և պասղազ (2, 159):

Պասղազ բառը հանդիպում է նաև խ հնչյունական տարբերակով՝ պասխազ. Որ եկաց պետ և պասխազ ի վերայ ամենայն աշխարհիս (2, 219): Քանի որ միայն այս երկու օրինակները կան բնագրում, դժվար է պարզել բաղաձայնների անցման ուղղությունը: Կ. Շահնազարյանցը նշում է, որ սա բազուխաստ պարսկերեն բառից է առաջացել⁴: Հ. Աճառյանն իր բառարանում բառի խ–ով տարբերակն է ընդգրկել՝ սկզբնաձև համարելով պասխազ բառը («հրամանատար» իմաստով)⁵: Այս մեկնաբանություններից կարելի է ենթադրել, որ սկզբնաձևը խ–ով տարբերակն է, և տեղի է ունեցել խ>ղա նցում:

գ) Շնչեղ խուլ բաղաձայնները վերածվել են ձայնեղների. սա բաղաձայնների եռաստիճան համակարգում ամենատարածված երևույթը չէ, բայց, այնուամենայն,

¹ Աբուսեճ հատուկ անվան մեջ կատարվել է նաև այլ հնչյունափոխություն՝ թ>ճ՝ Աբուսեթ>Աբուսեճ:

² Հմմտ. Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, մաս I, էջ 303–305:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 253–254:

⁴ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ (Ժան. և առաջ. Կ. Շահնազարյանցի), էջ 350:

⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Ե., 1979, էջ 30:

նայնիվ, հանդիպում է երկուսն:

Յ>ճ՝ Արցախ>Արձախ. Կամէին անցանել յամուրն աշխարհն *Արձախայ* (1, 110):

Թ>դ՝ Վրթանէս>Վրդանէս, Բերխեհեն>Բերդդեհէմ. Ապա երանելի աշակերտն Պետրոսի՝ սուրբն *Վրդանէս* (1, 133): Ի դրան սուրբ այրին, որ ի *Բերդդեհէմ* (1, 119):

Չ>ջ՝ հաչել>հաջել, ճաճանչավոր>ճաճանջաւոր. Սուտ են եւ որպէս զշուն *հաջեն* (2, 135): Որ եւ *ճաճանջաւոր* նշուլիք վկայեցաւ ի բարձանց (1, 235)՝:

դ) *Խուլ բաղաձայնները վերածվել են շնչեղ խուլերի*. Երկուսն երբեմն հանդիպում են բառեր, որոնց խուլ հնչյունը, ստանալով հազագային *հ* տարրը, վերածվել է շնչեղ խուլ բաղաձայնի.

Պ>փ՝ պայքար>փայքար, ապշել>ափշել. Ի տանէս մի իշխեսցէ դատ կամ *փայքար* հասել (1, 224): Եւ խելացնորեալ *ափշեցուցին* զնա (1, 101):

Կ>ք՝ Սեդրակ>Սեդրաք. Որդի երիցու մի, *Սեդրաք* անուն (2, 110):

Տ>թ՝ դատափետ>դատափեր. *Դատափեր* առնէին... Աստուծոյ (2, 184):

զ) *Շնչեղ խուլ բաղաձայնները վերածվել են խուլ բաղաձայնի*. Երկուսն սակավադեպ հանդիպում են նաև շնչեղ խուլ բաղաձայնների հնչյունափոխության օրինակներ.

Թ>տ՝ սուլթան>սուլտան. Զոր *սուլթան* կոչեն այժմ (1, 213):

Որոշ օրինակներում փոխազդեցական հնչյունափոխության հետևանքով շնչեղ խուլերը խլանում են: Մասնավորապես առնմանության երևույթն է հանդիպում, երբ հնչյուններից մեկը փոխում է որակը՝ նմանվելով ազդող հնչյունին.

Չ>ճ՝ ճիչ>ճիճ, ճաճանչավոր>ճաճանճաւոր. Ապա մի *ճիճ* պահապանացն... զօրացեալ լինէր (1, 233): Եւ *ճաճանճաւոր* մարգարտակապ զրահին (1, 79):

Նորություն էր *Տ* հնչյունի առաջին գրավոր վկայությունը:

Ստ. Օրբելյանն իր աշխատությունը գրել է 1297 թ., այն ժամանակաշրջանում, երբ այլ հեղինակներ նոր էին գործածում այդ հնչյունը, հետևաբար նա ևս *Տ* տառի առաջին կիրառողներից է եղել: Բնագրում թեև սակավ, բայց հանդիպում են բառեր, որոնցում *փ*-ի փոխարեն երբեմն գրված է նաև *Տ* բաղաձայնը.

փ> *Տ* փախրըլմսեհ // Ֆախրելմսեհ, Փռանգ // Ֆռանգ. Որք եւ զգուական անուամբ *Ֆախրելմսեհ* կոչէին (2, 87): Որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ *Ֆռանգ* ազգաւ (1, 302):

Կան նաև բառեր, որոնց համար *փ* հնչյունով տարբերակ չի հանդիպում տեքստում՝ *ԶաՖար*, Անաւֆրէ, պոսոֆրոստէս. Զոր սուլտան կոչեն այժմ, անիծեալն ԶաՖար (1, 213): Հրամայէ աւագ ծիկնաւպարին իւրոյ դիւանին *Անաւֆրէ* անուն (2, 98): Որ է պոսոֆրոստէս Հայոց մեծաց (1, 97):

Երկուսն *վ* // *ւ* հնչյունները գրաբարի համեմատությամբ գործառական շեղումներ են ցուցաբերում:

Հազվադեպ հանդիպում են օրինակներ, որոնցում ձայնավորից հետո գրվում է *վ*, այլ ոչ թե *ւ*՝ ի հակադրություն գրաբարի այն կանոնի՝ ըստ որի՝ *ւ* տառը գրվում է *ս*, *ե*, *ի* ձայնավորներից հետո և կարդացվում *վ*. վ տառը գրվում է միայն ո տառից հետո²: Օրինակ՝ Հաստատէ արձան.... *Արարաւազդայ* Շաղատնեցոյ (1, 219): Զաքարէ եւ եղբայր իւր *Իվանէ*՝ աթաբէկն (2, 87): Միայն մի քանի օրինակում է հանդիպում *վ* ձայնն անվան *ւ*-ով տարբերակը. Ի բռնակալութեանն Աթաբակ *Իւանէի* (1, 312):

Ինչպես նկատելի է, XIII դ. լեզվի հնչյունական համակարգում բաղաձայնների փոփոխությունները կրում են հնչյունափոխական, այլ տեղաշարժերի բնույթ,

¹ Հակառակ՝ ձայնեղ բաղաձայնի շնչեղ խուլ բաղաձայնի վերածվելու եզակի օրինակ է հանդիպում. *բ>փ* Աբխազ>Ափխազ. Ել ի հայրենի աշխարհէն իյրմէ եւ ի թագաւորեն *Ափխազաց* (2, 105):

² Տե՛ս Լ. Խաչատրյան, Գ.Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004, էջ 9:

այսինքն՝ հնչյունափոխությունը ոչ թե մեկ առանձին հնչյունի որակական փոփոխության է հանգեցրել, այլ դա (հնչյունափոխությունը) ընդգրկել է բաղաձայնական շարքերի տեղաշարժերը՝ առաջացնելով տեղաշարժ-տեղափոխություն բաղաձայնների եռաշարք համակար-ում: Դրանով հանդերձ, այդ տեղաշարժերը թեև ունեցել են գրային արտահայտություն, այնուամենայնիվ դրանք մնացել են ուղղախոսության մակարդակում և հետագայում չեն արտահայտվել իբրև հնչյունափոխության արդյունք և հետևանք: Դրանք բնութագրական են XIII դ. լեզվական իրավիճակին:

Գ. Երկբարբառների և եռաբարբառների փոփոխությունները:

XIII դարի հնչյունական համակարգում փոփոխություններ են տեղի ունեցել նաև երկբարբառների և եռաբարբառների գրության և արտասանության մեջ:

Երկբարբառների մեջ ամենաընդհանրական փոփոխությունը, որ կատարվել է ամբողջ հայերենում, աւ երկբարբառի վերածվելն է *o* պարզ ձայնավորի:

Քննության ենթակա երկու կան բազմաթիվ օրինակներ, որոնցում երկու տարբերակները *au* և *o'*, կիրառվում են հավասարապես, և դժվար է առանձնացնել, թե որի կիրառությունն է գերիշխում: Սա համընդհանուր իրողություն էր հայ պատմագրության մեջ: Օրինակ՝ Լաւռէ // Լոռէ, պռաւտաւՖրաւնդէս // պռոտոՖրաւնտէս // պռոտոՖրոստէս. վերջին օրինակում նկատելի է *au/o/n* անցումը. Ի թագա-

ւորէն Լաւռէ (2, 124): Եմուտ Իւանէ ի Լոռէ (2, 134): Որ կոչի ի հոռոմ լեզուն *պռոպոՖրաւնդէս* (1, 66): Որ պռոտոՖրոստէս Հայոց մեծաց (1, 97): Եւ կոչիլ *պռապռաՖրաւնդէս* պատրիարքին Հայոց (2, 228):

Դասական գրաբարում *au* երկբարբառը շեշտը կորցնելիս վերածվում էր ե պարզ ձայնավորի: Հետագայում *au>u* փոփոխություն նկատելի է նաև բառի ուղիղ ձևերում (անկախ շեշտից). երկու հաճախ *քդեաշխ* բառը ուղիղ ձևում հանդիպում է նաև հնչյունափոխված *քդեշխ* ձևով, ինչպես՝ Պատանդ առեալ *գրդեաշխն* Վրաց Աշուշա (1, 101): Օծանեն զնա ... *քդեշխն* Վրաց Ատրնեքսէի (1, 220):

Այլ երկբարբառը կրել է *au>u* փոփոխությունը՝ վերածվելով պարզ ձայնավորի. Այրարատ // Արարատ, ինչպես՝ Իշխէին միայն Շիրակայ և *Այրարարու* (2, 44): Հասեալ... ի գաւառն *Արարատու*՝ երևեցոցին գծածով ուխտ պայմանին (1, 101):

Իսկ *անգայռագեղ* բառի միայն հնչյունափոխված տարբերակն է հանդիպում բնագրում՝ *անգառագեղ*. Իբր զանգառագեղ գագան հարձակեցան (1, 108):

Եւ երկբարբառը բաց վանկում կարդացվում էր *au*: Գրաբարում բացակայում էր և տառը: Ժամանակի ընթացքում րաբարյան բաց վանկի *au* երկբարբառը սկսել է փոխարինվել *u* նշանով: Այդ մասին են վկայում երկու հանդիպող բազմաթիվ փաստեր: Ընդհանուր առմամբ տեքստում հավասարապես կիրառված են երկուսն էլ. օրինակ՝ *Ջեւանշէր* // *Ջևանշէր*. Եւ թողու ժառանգ զքաջագորն *Ջեւանշէր* եւ զՎահան: Որ եւ պայազատէր զտէրութիւն նորա *Ջևանշէր* բազում ժամանակօք (1, 245):

Այս հատուկ անունը մեկ անգամ հանդիպում է նաև *Ջուանշէր* ձևով, ինչը ենթադրել է տալիս, որ կարող էր լինել *au>u* անցում. Եղև ինձ *Ջուանշէրի*՝ աստուածապահ տեառն Սահակայ (1, 262):

Իսկ եռաբարբառը գրաբարում բառակազմության ժամանակ հնչյունափոխ-

¹ Աւ երկբարբառի *o* (և ոչ՝ *n*) փոփոխվելու մասին Վ. Առաքելյանը նշում է, որ եթե *n* հնչյունը մնացած լիներ իր մաքուր *o* հնչմամբ, ապա *au*-ի համար, որ *o* էր հնչում, լատիներենի *o*-ն չէին փոխառի, և պարզապես կգրեին *n*: Բայց *o* Դարում այս *n*-ն, ըստ նրա, արդեն բառակցքում փոխվել էր վո-ի կամ ուո-ի, հետևաբար սխալ կլիներ *au*-ը տառադարձել *n*, ուստի հարկավոր էր նոր տառ: Նա հավելում է, որ ոմանք կարծում են, որ փոխառվել է հունարենից, բայց նշում է, որ *o* Դարում շփումը մեծ է եղել լատիներենի հետ, հետևաբար ավելի հավանական է համարում այդ լեզվից փոխառված լինելը (Հմտ. Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն (խմբ. Ա. Կարապետեան, Ա. Յակոբեան), Ե., 2010, էջ 9):

վում էր *է(ե)* պարզ ձայնավորի: Սակայն բնագրում հանդիպող բառերում իայ եռաբարբառը չի հնչյունափոխվել. *Միայնարան* հաստատեցաք (2, 14): Դարձաւ *միայնակեաց* (2, 235): Գնդեվանս կոչի ուխտի պատճառաւ առ միայնաւորսն (1, 306), փոխարեն՝ մենաբան, մենակեաց, մենաւոր:

Ամփոփելով «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը՝ կարելի է արձանագրել.

1. Ձայնավորների հնչյունափոխությունը նոր դրսևորումներ է ձեռք բերել. *ե>ը, ո(օ)>ե, է (ե)>ա, ո>ու, օ>ու:*
2. Բաղաձայնների փոփոխությունները վերաբերում են եռաստիճան համակարգում բաղաձայնական շարքերի տեղաշարժ-տեղափոխություններին.
 - ա) Ձայնեղ բաղաձայնները վերածվում են խուլ բաղաձայնների:
 - բ) Խուլերը վերածվել են ձայնեղների:
 - գ) Շնչեղ խուլերը վերածվում են ձայնեղների:
 - դ) Խուլերը վերածվել են շնչեղ խուլերի:

3. XIII դարում ի հայտ եկած նոր հնչյունը՝ *Ֆ*-ն, կայունացման միտումներ է ցուցաբերում:

4. ա) Երկբարբառները և եռաբարբառները ընդհանուր առմամբ պահպանել են հնչյունափոխության գրաբարյան դրսևորումները (*եա>ե, ա>օ, աք>ա*):
 - բ) Բաց վանկում *ե* երկբարբառը հաճախ փոխարինվում է և տառով:
 - գ) *Բայ* եռաբարբառը հնչյունափոխության չի ենթարկվում:

Սույն հոդվածում քննված հնչյունական բոլոր փոփոխությունները, որոնք հանդիպում են Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկում, անշուշտ, հիմնականում լեզվի պատմական զարգացման և փոփոխությունների արդյունք են. թեև դրանցում կարող են լինել գրչագրական սխալներ, բարբառային ազդեցություններ և այլն:

Մինչ XIII դարը բառերի հնչյունական կազմի մեջ կատարված փոփոխությունները որոշակիորեն ազդել են XIII դարի հայերենի հնչյունական համակարգի նկարագրի վրա:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 04.12.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Ե., 1974:
2. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
3. Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. IV, Ե., 1979:
4. Վ. Առաքելան, Գրաբարի քերականութիւն (խմբ. Ա.Կարապետեան, Ալ.Յակոբեան), Ե., 2010:
5. Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004:
6. Լ. Լ. Խաչատրյան, Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի լեզուն (թեկն. ատենախոսության սեղմագիր), Ե., 1999:
7. Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, Ե., 1961:
8. Շ. Ղուկասյան, 10-րդ դարի հայ պատմագրության լեզուն (թեկն. ատենախոսության սեղմագիր), Ե., 2004:
9. Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, մաս I, Ե., 1982:
10. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Ե., 1987:
11. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ.հ. Ա, Բ, Փարիզ, 1859:
12. Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն (աշխարհաբար փոխադրումը, ծանոթագրությունները և առաջաբանը՝ Ա. Ա. Աբրահամյանի), Ե., 1986:

ОСОБЕННОСТИ ФОНЕТИЧЕСКОЙ СИСТЕМЫ ГРАБАРА В XIII ВЕКЕ
(ПО ТРУДУ "ИСТОРИЯ СЮНИКА" СТЕПАНОСА ОРБЕЛЯНА)

ХАЧАТРЯН ЛАЛИК

*Заведующий кафедрой армянского языка и методики его преподавания
Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна,
доктор филологических наук, профессор*

АВETИСЯН АНИ

Соискатель кафедры армянского языка и методики его преподавания

В XIII веке фонетическая система древнеармянского языка претерпела всевозможные изменения, которые в труде "История Сюника" выражаются с помощью новых чередований фонем: гласные встречаются в виде чередования, неизвестные в грабаре (t̥>ɾ, t̥(t̥)>u, o>ɱ). Чередование гласных обусловлено позицией фонем и ударением.

Согласные часто встречаются с качественными видоизменениями (q>ɭ, p>ɸ, ɲ>ɹ), которые в основном обусловлены влиянием диалектов и разговорной речи.

В труде встречается также появившаяся в XIII веке новая фонема (ɛ), которая вошла в армянский алфавит после этого периода.

Языку XIII века характерно превращение дифтонгов в монофтонги (tɕ>t̥, uɱ>o).

В XIII веке фонетическая система языка приняла особые характерные черты, которые повлияли на стойкую фонетическую систему грабара.

Дата представления статьи: 04.12.2012

PECULIARITIES OF THE PHONOLOGICAL SYSTEM OF GRABAR (CLASSICAL
ARMENIAN) IN THE 13TH CENTURY (BASED ON "HISTORY OF SYUNIK" BY
STEPANOS ORBELYAN

LALIK KHACHATRYAN

*Head of the Chair of the Armenian Language and its Teaching Methods,
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan,
Doctor of Philological Sciences, Professor*

ANI AVETISYAN

Researcher of the Chair of the Armenian Language and its Teaching Methods

In the 13th century the phonological system of the Classical Armenian Language underwent all the possible changes marked in terms of alternation of phonemes: the vowels occur in alternation atypical of Classical Armenian (t̥>ɾ, t̥(t̥)>u, o>ɱ). The vowel alternation was motivated by the position and word stress.

As for the consonants, they often appear with quantitative formal changes (q>ɭ, p>ɸ, ɲ>ɹ), which are mainly caused by the influence of the dialects and spoken language.

In the work mentioned above we come across also the monophthong ɛ which emerged in the 13th and entered the Armenian alphabet only after that period.

The Armenian language of the 13th is characterized by the conversion of diphthongs to monophthongs (tɕ>t̥, uɱ>o).

In the 13th century the phonological system in use acquired specific characteristic features which eventually left a stable impact on the phonological system of *grabar*.

Article submission date: 04.12.2012